# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

***Հունվարի 1-ին, շաբաթ.- Գ. օր Ծննդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ: Սրբոցն Բարսղի Հայրապետին եւ եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, Մեղբեստրոսի Հռովմայ Հայրապետին եւ Աբբայ Եփրեմի Խուրին Ասորւոյ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: Պատարագի ավարտին Հայրապետական մաղթանք կատարվեց, որից հետո պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Նորացուցեք զօրհնությունն թագավորին հավիտենից» (Մեղեդի) բնաբանով:

Ապա ողջ միաբանությունը Վեհարանում շնորհավորեց Վեհափառ Հայրապետի Ամանորը: Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, հանուն Մայր Աթոռի միաբանության, շնորհավորեց Նորին Սրբությանը՝ նրան առողջություն, արևշատություն և գալիք տարում արգասաբեր աշխատանք ցանկանալով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը նույնպես շնորհավորեց ներկաների Ամանորը և ցանկացավ, որ 2000 թվականին ամենքի համար ծրագրավորված աշխատանքի իրականացման տարի լինի:

***Հունվարի 2-ին, կիրակի.-Ջ. Կիրակի Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն, և առաջնորդն իբրև զսպասաւորն» (Ղուկ. ԻԲ 26) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վահափառ Հայրապետը:

***Հունվարի 3-ին, երկուշաբթի.- Ե. օր Ծննդեան պահոց:***

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին «Հայաստանի նոր անուններ» բարեգործական կազմակերպության պատանի երաժիշտները, որոնք Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դահլիճում, իրենց գեղեցկահունչ կատարումներով, շնորհավորեցին Վեհափառ Հայրապետի Նոր տարին ու Ս. Ծնունդը (տե՛ս էջ 17):

***Հունվարի 4-ին, երկուշաբթի.- Զ. օր Ծննդեան պահոց:***

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայաստանում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բալ Անանդին, որի՝ Հայաստանում կատարելիք դիվանագիտական առաքելության 100-րդ օրը լրացավ վերջերս:

***Հունվարի 5-ին, չորեքշաբթի.- Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Ծնաւ նոր արքա ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ» (Շարական) բնաբանով (Տե՛ս էջ 91): Ս. Պատարագից առաջ չորս սարկավագներ Ավագ Ս. Խորանից ընթերցեցին Դանիելի Թուղթը:

Ս. Պատարագից հետո ողջ միաբանությունն ու ուսանողությունը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողության ներքո շարժվեցին դեպի միաբանական սեղանատուն՝ Տիրոջ Ծննդյան ավետիսը ցնծությամբ նշելու:

***Հունվարի 6-ին, հինգշաբթի.- ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Վեհափառ Հայրապետն իր հայրապետական պատգամն ուղղեց հավատացյալներին՝ «Ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» (Ղուկ. Բ 10) բնաբանով:

Ապա Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողությունը:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ կառավարության, ՀՀ Ազգային ժողովի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, բազմաթիվ հյուրեր:

***Հունվարի 7-ին, ուրբաթ.- Բ. օր Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գլըճյանը:

Ս. Պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ վասն համորեն ննջեցելոց:

***Յունվարի 9-ին, կիրակի.- Դ. օր Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավագ քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Շահե արքեպս. Անեմյանը՝ «Եւ Բանն մարմին եղեւ, եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ» (Յովհ. Ա 14) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Յունվարի 12-ին, չորեքշաբթի.- Է. օր Ծննդեան:***

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հավաք: Հավաքին Վեհափառ Հայրապետը միաբանների ուշադրությանը հանձնեց դեպի Սուրբ Վայրեր իր առաջիկա ուխտագնացության ծրագիրը:

***Յունվարի 13-ին, հինգշաբթի.- Ը. օր Ծննդեան:***

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնին, որը եկել էր շնորհավորելու Վեհափառին Ս. Ծննունդյան տոնի առիթով և բարի ճանապարհ մաղթելու՝ Երուսաղեմ կատարելիք ուխտագնացությունից առաջ:

***Յունվարի 14-ին, ուրբաթ.- Պահք:***

Այսօր, երեկոյան, Ս. Ծննդյան տոներին մասնակցելու նպատակով, Երուսաղեմ մեկնեց Վեհափառ Հայրապետը:

***Յունվարի 16-ին, կիրակի.- Ա. կիրակի զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովսեփ քհն. Ալեքսանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Քանզի զլուխ պատուիրանին՝ սէր է, ի սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց, եւ յանկեղծաւոր հաւատոց» (Ա Տիմ. Ա 5) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Յունվարի 23-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ, եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեան» (Յովհ. Գ. 19) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Յունվարի 25-ին, երեքշաբթի.- Սրբոցն Վահանայ Գողթնացւոյն, Եւգինեայ կուսին եւ հօրն նորա Փիլիպպոսի եւ մօրն Կղօդեայ եւ երկուց եղբարցն Սերգեայ եւ Ափիրոնի եւ երկուց ներքինեացն:***

Այսօր, ժամը 16.30-ին, իր ուխտագնացությունն ավարտելով, Երուսաղեմից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ Վեհափառ Հայրապետը:

***Յունվարի 29-ին, շաբաթ.- Սրբոյն Գրիգորի աստուածաբանին:***

Այսօր Վեհափառ Հայրապետը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ընկերակցությամբ, իր առաջին պաշտոնական այցելությունը կատարեց Հայաստանի Հանրապետության Կրոնի գործերի պետական խորհուրդ:

**Նույն օրը** Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Վեհափառ Հայրապետն ընդունեց Եվրախորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի պատվիրակությանը:

***Յունվարի 30-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը: «Հայր մեր»-ից առաջ խոսեց Վեհափառ Հայրապետը, որը Երուսաղեմ կատարած իր այցելության տպավորությունները հաղորդեց հավատացյալ հայորդիներին:

***Յունվարի 31-ին, երկուշաբթի.- Սրբոցն Կիպրիանոսի եպիսկոպոսին եւ քառասուն եւ հինգ վկայիցն եւ սրբոց կուսանացն Յուստինեայ, Եւփիմեայ եւ Քրիստինեայ:***

Այսօր, ժամը 12.00-ին, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Թորգոմ աբեղա Տոնիկյանի, Վահան սրկ. Զաքարյանի, Արարատ սրկ. Գափոյանի և Արա սրկ. Նալչաջյանի ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը (տե՛ս էջ 87):